Հաստատված է
Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված
վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
2021 թվականի հունիսի 14-ի թիվ 3 արձանագրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում հիմնադրված և գործող «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման, գործունեության, նիստերի գումարման և վարման, ինչպես նաև հանձնաժողովի լուծարման կարգը:
2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Հիմնադրամների մասին» և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված իմաստներով:

ԳԼՈՒԽ 2. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԸ

3. Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների կառավարման նպատակով Հիմնադրամի կազմում ստեղծվում է ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողով:
4. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը գործում է Օրենքի, Հիմնադրամի կանոնադրության, սույն կարգի և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված այլ կարգերի հիման վրա:
5. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անդամներից, որոնք են.՝
   ա) Հիմնադրամի գործադիր տնօրենը
   բ) Տնօրենի տեղական/Ծրագրերի ղեկավար
   գ) Փոխհատուցումների փոխտնօրեն

դ) Հաշվապահը
ե) Իրավաբանը

6. Հանձնաժողովը նախագահում է Հիմնադրամի տնօրենը:
7. Հիմնադրամի տնօրենն ի պաշտոնե հանդիսանում է ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամ:
8. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի անդամները նշանակվում են Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդի կողմից անժամկետ:

ԳԼՈՒԽ 3. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի գործառույթներն են՝
9.1. Պարտավորությունների գնահատումը ըստ ժամկետների և ըստ գումարների:
9.2. Պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը Հիմնադրամի Գործադիր հանձնաժողովին
9.3. Օրենքով նախատեսված հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում, համապատասխան պետական մարմնի կողմից զինծառայողի, ինչպես նաև շահառուի (շահառուների) վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) հիման վրա հատուցման գումարների վերաբերյալ որոշումների ընդունումը:
9.4. Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարման ժամկետները հետաձգելու մասին որոշում ընդունելու առաջարկի ներկայացումը:
9.5. Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն պարտատոմսեր կամ այլ արժեթղթեր թողարկելու վերաբերյալ առաջարկի ներկայացումը:

ԳԼՈՒԽ 4. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
11. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերը գումարվում են Հիմնադրամի գտնվելու վայրում: Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի արտագնա և արտահերթ նիստ կարող է գումարվել նախագահի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝

Հանձնաժողովի նախագահի պարտականությունները իրականացնող անդամի նախաձեռնությամբ:

12. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ:
13. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերին, առանձին հարցերի քննարկումների ժամանակ, կարող են մասնակցել նաև հրավիրված անձինք, որոնց ցանկը, ըստ հարցերի սահմանվում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի տվյալ օրվա նիստի օրակարգով:
14. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները կարող են մասնակցել հանձնաժողովի բոլոր նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:
15. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստը նախագահում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նախագահը:
16. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նախագահը ՝
    16.1. վարում է Հանձնաժողովի նիստերը,
    16.2. օրակարգի շրջանակներում ձայն է տալիս ելույթների համար,
    16.3. զեկուցողին ուղղված հարցերի և ելույթների համար ձայն է տալիս ըստ հաջորդականության,
    16.4. իրականացնում է կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
17. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի 5 անդամներից առնվազն 3-ը:
18. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ, ընդ որում՝ հանձնաժողովի անդամների ունեն հավասար ձայնի իրավունք: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահողի ձայնը որոշիչ է:
19. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերը ձայնագրվում են: Հանձնաժողովի նիստերի վերաբերյալ արձանագրություններ չեն կազմվում: Հանձնաժողովի կողմից որդեգրված մոտեցումների և սկզբունքների վերաբերյալ կազմվում է գրավոր փաստաթուղթ, որը ստորագրվում է Հանձնաժողովի անդաների կողմից:
20. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի որոշումները կարող են փաստաթղթավորվել:
21. Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի նիստերի քննարկմանը ներկայացվող հարցերի նախապատրաստման աշխատանքները

կոորդինացնում է Հիմնադրամի իրավաբանը և վերահսկում է Հիմնադրամի գործադիր տնօրենը:

22. Հանձնաժողովում քննարկվելիք հարցերի վերաբերյալ նյութերը պատրաստվում են համապատասխան ստորաբաժանման/աշխատակիցների կողմից նիստից առնվազն 1 օր առաջ:

ԳԼՈՒԽ 5. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

26. Հանձնաժողովը լուծարվում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից Հանձնաժողովի լուծարման վերաբերյալ որոշման ընդունման միջոցով: